**Արձանագրություն N 3**
**ՀՀՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի**

ք.Երևան

12 դեկտեմբերի 2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս.Մակարյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ա. Այվազյան |
| | Ա. Զաքարյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Լ. Գրիգորյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ.Կարապետյան |

**1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**
**(Ս.Մակարյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին,
3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
4. Գնահատման մասին,
5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**2. <u>Բանակցությունների կազմակերպման մասին</u>**
**(Ս.Մակարյան)**

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժնի համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 11:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ են ներկայացվել՝ Ա/Ձ Ռուստամ Հակոբյան Ռաֆիկի կողմից՝ 1-ին չափաբաժնի համար 4 750 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար 4 800 000 ՀՀ դրամ: Ա/Ձ Հարություն Քյուրքչյան Համբարձումի կողմից 3-րդ չափաբաժնի համար 4 095 000 ՀՀ դրամ: Ա/Ձ Լևոն Շախնազարյան Պավելի կողմից՝ 4-րդ չափաբաժնի համար 4 105 000 ՀՀ դրամ: Արթվոյաժ ՍՊԸ կողմից՝ 1-ին չափաբաժնի համար 4 900 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար 4 900 000 ՀՀ դրամ: Էլիտբաս ՍՊԸ կողմից՝ 1-ին չափաբաժնի համար 6 000 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար 6 000 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար 4 100 000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար 4 110 000 ՀՀ դրամ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**3. <u>Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին</u>**
**(Ս.Մակարյան)**

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| **1** | **Ուղևորափոխադրման ծառայություն /1/** | | | | |
| 1 | Ա/Ձ Ռուստամ Հակոբյան Ռաֆիկի | 3000000 | 1750000 | | 4750000 |
| 2 | «Արթվոյաժ» ՍՊԸ | 4410000 | 490000 | | 4900000 |
| 3 | «Էլիտբաս» ՍՊԸ | 5500000 | 500000 | | 6000000 |
| 2 | **Ուղևորափոխադրման ծառայություն /2/** | | | | |
| 1 | Ա/Ձ Ռուստամ Հակոբյան Ռաֆիկի | 3800000 | 1000000 | | 4800000 |
| 2 | «Արթվոյաժ» ՍՊԸ | 4410000 | 490000 | | 4900000 |
| 3 | «Էլիտբաս» ՍՊԸ | 5500000 | 500000 | | 6000000 |
| 3 | **Ուղևորափոխադրման ծառայություն /3/** | | | | |
| 1 | Ա/Ձ Հարություն Քյուրքչյան Համբարձումի | 3795000 | 300000 | | 4095000 |
| 2 | «Էլիտբաս» ՍՊԸ | 3500000 | 600000 | | 4100000 |
| 3 | «Արթվոյաժ» ՍՊԸ | 4042500 | 1732500 | | 5775000 |
| 4 | **Ուղևորափոխադրման ծառայություն /4/** | | | | |
| 1 | Ա/Ձ Լևոն Շախնազարյան Պավելի | 3790000 | 315000 | | 4105000 |
| 2 | «Էլիտբաս» ՍՊԸ | 3600000 | 510000 | | 4110000 |
| 3 | «Արթվոյաժ» ՍՊԸ | 4042500 | 1732500 | | 5775000 |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 4. <u>Գնահատման մասին</u>

**(Ս.Մակարյան)**

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| ***Ընտրված մասնակից ճանաչել՝*** | | |
| 1 | Ա/Ձ Ռուստամ Հակոբյան Ռաֆիկի | 1, 2 |
| 2 | Ա/Ձ Հարություն Քյուրքչյան Համբարձումի | 3 |
| 3 | Ա/Ձ Լևոն Շախնազարյան Պավելի | 4 |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 5. <u>Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին</u>

**(Ս.Մակարյան)**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության

ժամկետ սահմանել՝ պայմանագիր կքնելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ս.Մակարյան |
| բացող անդամներ՝ | Ա.Այվազյան |
| | Ա.Զաքարյան |
| գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Լ. Գրիգորյան |
| քարտուղար՝ | Գ.Կարապետյան |